ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ

ԼԵՎՈՆ ԵԱՁԱՏՐՅԱՆ

Սոցիալիստական տնտեսության ժամանակակից փուլին բնորոշ է անցումը տնտեսավարման ինտենսիվ մեթոդներին։ ՍՄԿԿ XXVI համագումարը նախանշեց էկոնոմիկայի ինտենսիվացման հիմնական ուղղությունները, նախատեսելով, որ «արտադրության արդյունքներն աճեն ավելի արագ, քան դրա վրա կատարվող ծախսումները, որ, արտադրության մեջ ներգրավելով համեմատաբար ավելի քիչ ռեսուրսներ, կարելի լինի հասնել ավելի շատ բանի»[1]։ Ինտենսիվացումը սոցիալիստական արտադրության զարգացման օրինաչափ ու օբյեկտիվ պահանջն է, որը հիմնվում է ստեղծված արտադրական պոտենցիալի ռացիոնալ և խնայողական օգտագործման վրա և որի դեպքում տեղի է ունենում հասարակական աշխատանքի արտադրողականության զգալի աճ։ Զարգացած սոցիալիզմի պայմաններում գերակշռող պետք է դառնա ինտենսիվ վերարտադրության ֆոնդախնայողական ձևը, որի դեպքում աշխատանքի արտադրողականության բարձրացումը տեղի է ունենում անցյալ աշխատանքի տնտեսման հետ միասին (ի տարբերություն ֆոնդատար ձևի, երբ աշխատանքի ֆոնդագինվածության աճի տեմպերը գերազանցում են աշխատանքի արտադրողականության աճի տեմպերին)։ Վ. Ի. Լենինը, ցույց տալով սոցիալիզմի ժամանակ խնայողության ռեժիմի կարևորությունը, նշել է, որ «Կոմունիզմը սկսվում է այնտեղ, որտեղ երևան է գալիս շաբաթային բանվորների անձնվեր, ծանր աշխատանքը հաղթահարելու հոգսը՝ բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, պահպանելու յուրաքանչյուր փութ հացը, ածուխը, երկաթը և այլ մթերքներ...»[2]։

ՍՄԿԿ տնտեսական ստրատեգիայի առաջիկա ժամանակաշրջանի կարևորագույն սկզբունքներից է ռեսուրսների տնտեսումը և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը։ Ինտենսիվացման մակարդակի բարձրացումը շատ բանով կախված կլինի հումքի, նյութերի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների բոլոր տեսակների արդյունավետ ու խնայողաբար օգտագործումից, արտադրության նյութատարության կրճատումից։ Հայտնի է, որ համաշխարհային լավագույն ցուցանիշների համեմատությամբ ազգային եկամտի մեկ միավորի վրա մեզանում ավելի շատ հումք ու էներգիա է ծախսվում։

Արտադրանքի արտադրության ծախքերում զգալի մաս են կազմում նյութական ծախսերը։ 1981 թ. ՀՍՍՀ արդյունաբերությունում նյութական ծախսերի (հումքի, նյութերի, վառելիքի և էներգիայի) տեսակարար կշիռն արտադրականում կազմեց 73,2%[3]։ Ընդ որում, պետք է նշել, որ արտադրության ծախքերում նյութական ծախսերի տեսակարար կշռով անհնար է դատել հումքի, նյութերի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների տնտեսման համապատասխան ռեզերվների մասին։ Եվ չի կարելի համաձայնել այն տեսակետի հետ, ըստ որի «նյութական ռեսուրսների տնտեսման ռեզերվները ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում նույնը չեն։ Ամենամեծ ռեզերվները գոյություն ունեն արդյունաբերության այն ճյուղերում, որտեղ արտադրանքի արտադրու-

---

1 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 65։

2 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 26։

3 Հաշվարկված է ըստ «Народное хозяйство Армянской ССР» (Ереван, 1982) ժողովածուի 86-րդ էջի տվյալների։

թյան ծախքերի կառուցվածքում առավել զգալի մաս են կազմում հումքի, նյութերի, վառելիքի և էներգիայի ծախսումները»[4]։ Մեր կարծիքով, այստեղ անհրաժեշտ է նշել հետևյալը։ Նախ և առաջ, արտադրանքի արտադրության ծախքերում նյութական ծախսերի տեսակարար կշռով դժվար է որոշել նյութերի տնտեսման ռեզերվների մակարդակը։ Այնուհետև, ինչպես հայտնի է, ոչ միայն տարբեր ճյուղերի արտադրանքը, այլև մի ճյուղի կողմից թողարկվող միատիպ շինվածքներն ունենում են արտադրության ծախքերում նյութական ծախսերի տարբեր տեսակարար կշիռ։ Այսպես, օրինակ, հաշվողական տեխնիկայի տարբեր միջոցների համար նյութական ծախսերի տեսակարար կշիռն արտադրանքի ինքնարժեքում կազմում է 10—85%[5]։ Դա նույնպես դժվարացնում է ճյուղում եղած ռեզերվների իրական մեծության որոշումը։ Բացի այդ, նման հարցադրման դեպքում հաշվի չենք առնում արդյունաբերության տարբեր ճյուղերում արտադրության տեխնիկական ու տեխնոլոգիական առանձնահատկությունների ազդեցությունը։ ՀՍՍՀ մեքենաշինության ու մետաղամշակման ճյուղում հումքի, նյութերի, վառելիքի և էներգիայի ծախսերի տեսակարար կշիռն արտադրության ծախքերում 1981 թ. կազմել է 56,4%[6]։ Սակայն չի կարելի ասել, որ այստեղ նյութերի տնտեսման ռեզերվները զգալիորեն ավելի քիչ են, քան, ասենք, ՀՍՍՀ քիմիական և նավթաքիմիական արդյունաբերության կամ, ասենք, թեթև արդյունաբերության ճյուղերում, որտեղ այդ ցուցանիշը հավասար է համապատասխանաբար 76,5 և 81,5 %-ի[7]։ Այսպիսով, արդյունաբերությունում նյութական ռեսուրսների տնտեսման ռեզերվների որոշման նման մոտեցումը կարող է հանգեցնել զգալի անճշտությունների։

Տնտեսության ինտենսիվ վարումը նախատեսում է նյութական ռեսուրսների խնայողական օգտագործում ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում։ Այժմ ավելի ու ավելի մեծ կարևորություն է տրվում ինչպես հանքային ռեսուրսների արդյունահանման արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ նյութական ռեսուրսների ռացիոնալ ու խնայողական օգտագործմանն արդյունաբերության մշակող ճյուղերում։ Վերջիններում նյութական ռեսուրսների տնտեսումը թույլ է տալիս հումքի արտադրության նույն կամ նույնիսկ ավելի քիչ ծավալի դեպքում ժողովրդական տնտեսությանը մատակարարել պատրաստի ավելի շատ արտադրանք։ Արդյունաբերության մշակող ճյուղերում նվազ նյութատար արտադրանքի թողարկման դեպքում կրճատվում են տրանսպորտային ծախսերը, ինչպես նաև իջնում է սպառողի մոտ մեքենաների ու սարքավորումների վերանորոգման համար անհրաժեշտ ծախսերի մեծությունը։ Ընդ որում, պետք է նշել, որ մշակող ճյուղերում նյութերի տնտեսումը հասարակական արտադրության արդյունավետությունը բարձրացնում է, նաև այն պատճառով, որ հսկայական դրամական միջոցներ են ազատվում համեմատաբար մեծ կապիտալատարություն ու ֆոնդատարություն ունեցող արդյունահանող ճյուղերում։ Հաշվարկները ցույց են տալիս, որ արդյունահանող արդյունաբերությունում 1 մլն ռ. հումքի, նյութերի և վառելիքի արտադրության համար անհրաժեշտ հզորությունների ստեղծման նպատակով ծախսվում են 2,3 մլն ռ. կապիտալ ներդրումներ, իսկ մշակող արդյունաբերությունում համապատասխան հզորությունների ստեղծման համար՝ 0,7 մլն ռ. կապիտալ ներդրումներ[8]։

Ավելի ձեռնտու է նյութական ռեսուրսների տնտեսումն իրականացնել մշակող արդյունաբերությունում, քան տվյալ քանակությամբ նյութերի արտադ-

---

[4] А. Фальков, Экономия и бережливость—условия роста эффективности производства, Л., 1981, с. 22—23.

[5] Л. Розенова, Нормативная чистая продукция и повышение эффективности производства («Вопросы экономики», 1982, № 1, с. 29).

[6] Հաշվարկված է ըստ «Народное хозяйство Армянской ССР» (Ереван, 1982) ժողովածուի 86-րդ էջի տվյալների։

[7] Նույն տեղում։

[8] «Плановый баланс народного хозяйства», М., 1977, с. 197.

ության համար անհրաժեշտ լրացուցիչ հզորություններ ստեղծել արդյունահանող ճյուղերում։ Պետք է հաշվի առնել նաև, որ երկրի ընդերքում գտնվող հանքահումքային ռեսուրսների շատ տեսակներ ունեն սահմանափակ պաշարներ, և գնալով օգտակար հանածոների արդյունահանման պրոցեսը բարդանում է՝ կապված լեռնաերկրաբանական պայմանների վատացման հետ։

ՍՍՀՄ էկոնոմիկայի զարգացման մեջ գերակշռող են եղել նյութական ռեսուրսների օգտագործման էքստենսիվ մեթոդները, որոնք հանգեցրել են ժողովրդատնտեսական զգալի կորուստների։

Բարձր տեմպերով է զարգանում մեքենաշինությունը ՀՍՍՀ-ում։ Մեքենաշինության ու մետաղամշակման ճյուղի արտադրանքի տեսակարար կշիռը ՀՍՍՀ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ 1970 թ. 18,1-ի դիմաց 1981 թ. կազմեց 28,6%։ Եվ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հանրապետությունը չունի սեփական սև մետալուրգիայի բազա և մեքենաշինության հիմնական հումք հանդիսացող սև մետաղները ստացվում են դրսից, որը կապված է տրանսպորտային մեծ ծախսումների հետ, ապա առավել ևս կընդգծվի ՀՍՍՀ մեքենաշինական ձեռնարկություններում մետաղների արդյունավետ օգտագործման ժողովրդատնտեսական կարևորությունը։ Սակայն պետք է նշել, որ դեռևս ՀՍՍՀ մեքենաշինությունում ցածր է մետաղի օգտագործման մակարդակը։ Այդ ճյուղի ձեռնարկություններում նյութական ռեսուրսների օգտագործման ժամանակ առաջացած մեծ քանակությամբ թափոնների մասին է վկայում այն փաստը, որ մեքենաշինության շատ արտադրատեսակներ ունեն նյութերի օգտագործման ցածր գործակից։ Այսպես, օրինակ, Երևանի ֆրեզերային հաստոցների գործարանում արտադրվող 675 Պ և 675Պ-1 մակնիշի ֆրեզերային հաստոցների համար նյութերի օգտագործման գործակիցը համապատասխանաբար 0,6 և 0, 62 է, իսկ 675 Պ Ֆ-1 մակնիշի ֆրեզերային հաստոցի համար՝ 0,55։ Այնինչ մեքենաների պատրաստման ժամանակակից տեխնոլոգիան հնարավորություն է տալիս մետաղի օգտագործման գործակցի մեծությունը հասցնել մինչև 0,85—0,95-ի[10]։

Մեքենաշինությունում մետաղի ինտենսիվ օգտագործումն անմիջականորեն կապված է տեխնիկայի և տեխնոլոգիայի կատարելագործման ու արտադրությունում գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների ներդրման հետ։ Հիմնականում նոր մեքենաների ու սարքավորումների օգտագործման հիման վրա է հնարավոր դառնում մետաղ և էներգիա խնայող տեխնոլոգիական պրոցեսների կիրառումը։ Ինչպես նշել է Կ. Մարքսը, «գործադրվող մեքենաների ու գործիքների լավորակությունից է կախված այն, թե արդյոք արտադրության պրոցեսում հումքի մի ավելի մե՞ծ, թե՞ ավելի փոքր մասն է թափթփուկի վերածվում»[11]։ Մեքենաշինությունում ներդրվող ավտոմատ ու հոսքային նոր գրծերը զգալիորեն բարձրացնում են արտադրության տեխնիկական մակարդակը, նպաստում օգտագործվող նյութական ռեսուրսների տնտեսմանը։ Եթե 1975 թ. հուլիսի 1-ի տվյալներով ՀՍՍՀ մեքենաշինության ու մետաղամշակման ձեռնարկություններում տեղակայված են եղել 299 մեքենայացված հոսքային ու ավտոմատ գծեր, ապա 1981 թ. հուլիսի 1-ի տվյալներով այդ թիվն արդեն հասել էր 607-ի, այսինքն՝ ավելացել էր մոտ երկու անգամ[12]։

Մեքենաշինական ձեռնարկություններում մետաղի օգտագործման բարելավման ու գոյացող թափոնների կրճատման կարևոր պայմաններ են ձուլման առաջավոր մեթոդների կիրառումը, դրոշմման միջոցով մետաղների մշակումը, բարելավված որակի գլանվածքի օգտագործումը, դետալների պատրաստումը փոշեմետալուրգիայի եղանակով, եռակցման մեթոդների լայն օգտագործումը և այլն։ Շատ կարևոր գործոն է անհրաժեշտ տեսակի ու տիպաչափերի մե-

---

9 «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1982, с. 72.

10 «Экономические рычаги рационального использования ресурсов», М., 1981, с. 30.

11 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, մաս 1, գիրք 3, Երևան, 1947, էջ 81։

12 Հաշվարկված է ըստ «Народное хозяйство Армянской ССР» (Ереван, 1982) ժողովածուի 49-րդ էջի տվյալների։

տաղների մատակարարումը ձեռնարկություններին։ Հաշվված է, որ եթե կտրման պրոցեսների փոխարեն 1 մլն տոննա գլանվածքը մշակվի ճշգրիտ դրոշման միջոցով, ապա կստացվի 150 հազ. տոննա մետաղի տնտեսում[13]։ Հայտնի է, որ փոշեմետալուրգիայի եղանակով դետալների պատրաստումը հնարավորություն է տալիս տնտեսել դրամական զգալի միջոցներ՝ կապված մետաղի տնտեսման և կենդանի աշխատանքի խնայման հետ։ ՍՍՀՄ-ում մետաղափոշու արտադրությունը, 1975 թ. համեմատությամբ, 1985 թ. նախատեսվում է ավելացնել 4,4, իսկ 1990 թ.՝ 10 անգամ[14]։

Հասարակական արտադրության նյութախնայողական ուղղության դեպքում տեխնիկայի ու տեխնոլոգիայի օգտագործման առավելություններն արտահայտվում են ոչ միայն կենդանի աշխատանքի արտադրողականության բարձրացման, այլև հումքի ու նյութերի տնտեսման միջոցով։ Արտադրողական ուժերի զարգացման ժամանակակից պայմաններում բարձր արդյունավետ աշխատանքի գործիքները թույլ են տալիս արտադրության պրոցեսն իրականացնել նվազագույն թափոններով։ Այդ թափոններն էլ, որոշակի վերամշակումից հետո, կարող են ծառայել որպես լիարժեք հումք։ Կ. Մարքսը ցույց է տվել արտադրության թափոնների օգտագործման արդյունավետությունը, ընդգծելով, որ «այս թափթփուկները— մի կողմ թողած այն ծառայությունը, որ նրանք մատուցում են իրրև նոր արտադրատարրեր— այն չափով, որով նրանք կրկին վաճառելի են դառնում, էժանացնում են հումքի ծախսերը, որոնց մեջ միշտ հաշվվում է նրա նորմալ թափթփուկը, այսինքն այն քանակը, որ միջին հաշվով պետք է կորչի հումքի վերամշակման ժամանակ»[15]։ Մետաղի օգտագործման ինտենսիվացումը չի կարելի պատկերացնել առանց առաջացած թափոնների արդյունավետ օգտագործման։ Չպետք է մոռանալ, որ մետաղական ջարդոնից հալված պողպատը հանքաքարից ստացվածի համեմատությամբ 20 անգամ էժան է[16]։

Մեքենաշինությունում մետաղների առավել առաջադիմական և տնտեսապես ձեռնտու տեսակների օգտագործման պրոցեսին հաստուկ է արտադրանքի մետաղատարության կրճատումը և ժողովրդատնտեսական արդյունավետության բարձրացումը։ 11-րդ հնգամյակում աճի բարձր տեմպեր են նախատեսվում մետաղների այնպիսի արդյունավետ տեսակների արտադրության համար, ինչպիսին, ասենք, սառը գլանման պողպատաթերթի, սառը գլանված ժապավենի, գլանվածքի ձևավոր և գերճշգրիտ պրոֆիլների և այլնի արտադրությունն է։ Կարևոր նշանակություն ունի պլաստմասսայից պատրաստված դետալների օգտագործումը մեքենաների ու սարքավորումների կոնստրուկցիաներում։

Մետաղի խնայումը, ինչպես արդեն ասվեց, մեծ չափով կախված է նոր տեխնիկայի ներդրումից ու կիրառվող տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործումից։ Մեքենաշինական շատ արտադրատեսակների տեսակարար նյութատարությունն արտասահմանյան համանման լավագույն նմուշների համեմատությամբ ավելի բարձր է։ Կոնստրուկտորական առաջադիմական միջոցառումները հնարավորություն կտան տնտեսելու մեծ քանակությամբ նյութական ծախսեր։ Սակայն արտադրության նյութատարության զգալի կրճատման կարելի է հասնել տեխնիկական, տնտեսական, կազմակերպական և այլ փոխկապված միջոցառումների կիրառմամբ, որոնք կելնեն ոչ միայն ձեռնարկության կամ ճյուղի շահերից, այլ նախ և առաջ հաշվի կառնեն հասարակական ծախսերի արդյունավետությունը։

---

[13] Л. Тимошенко, Пути экономного использования материальных ресурсов в промышленности («Экономика Советской Украины», 1982, № 11, с. 41).

[14] «Экономическая газета», 1983, № 4, с. 1.

[15] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, մաս 1, գիրք 3, էջ 57։

[16] И. Пашко, Интенсификация экономики и снижение металлоемкости производства («Вопросы экономики», 1982, № 1, с. 17).

Այժմ խիստ կարևոր նշանակություն է տրվում տնտեսական այնպիսի ցուցանիշների, խթանների և լծակների կիրառմանը, որոնք առավել մեծ չափով են նպաստում նյութական ծախսումների կրճատմանը։ Պլանավորվող ցուցանիշները պետք է լավագույն պայմաններ ստեղծեն արտադրանքի նյութատարության կրճատման համար։ Մեքենաշինությունում մետաղի արդյունավետ օգտագործման խնդրի լուծումը անխզելիորեն կապված է սև և գունավոր մետաղների ծախսման տեխնիկապես հիմնավորված նորմաների կիրառման հետ։ Մեքենաշինական արտադրության արդյունավետության բարձրացման կարևոր գործոն է արտադրական պրոցեսի յուրաքանչյուր փուլում մետաղի տնտեսումը։ Քննենք այն հարցը, թե արտադրական պրոցեսի որ փուլում (սկզբնական, թե վերջնական) իրականացված մետաղի տնտեսումն է համարվում առավել արդյունավետ (ընդունենք, որ հաշվի չենք առնում մետաղի տրանսպորտն ուղղված ծախսերի մեծությունը, որը արտադրանքի արտադրության տեխնոլոգիական տարբեր պրոցեսներում տարբեր է)։

Մեքենաշինությունում մետաղի օգտագործումը կապված է որոշակի թվով տեխնոլոգիական պրոցեսների իրագործման հետ։ Արտադրական պրոցեսի վերջնական փուլերում մետաղի տնտեսման համեմատ սկզբնական փուլերում կատարված տնտեսումը հնարավորություն է տալիս չիրականացնել անհրաժեշտ աշխատանքի ծախսումները։ Այս իմաստով պետք է համաձայնել այն տեսակետի հետ, ըստ որի՝ քանի որ մշակվող նյութի արժեքը հաջորդաբար ավելանում է կատարված աշխատանքի ծախսումներով, ապա ժողովրդատնտեսական ավելի մեծ արդյունք է ստացվում մշակման նախնական փուլերում կատարված հումքի ու նյութերի տնտեսումից[17]։ Մեր կարծիքով, տվյալ հարցի դիտարկման ժամանակ անհրաժեշտ է նաև հաշվի առնել նյութական ռեսուրսների տնտեսման հնարավորությունները և ուղերվներն արտադրական պրոցեսի տարբեր փուլերում՝ կապված արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունների հետ։ Մեքենաշինությունում մետաղի խնայման առավել մեծ հնարավորություններ կան արտադրության սկզբնական տեխնոլոգիական պրոցեսներում։ Մեքենաշինական արտադրությունում մետաղի տնտեսման խոշոր ուղերվ է այնպիսի նախապատրաստուկների ընտրությունը, որոնք իրենց չափերով ու ձևով ավելի լրիվ են համապատասխանում պատրաստվող դետալի չափերին ու ձևին։ Մեքենաշինությունում տնտեսապես ձեռնտու նախապատրաստուկների օգտագործումը հանգեցնում է արդյունաբերության տարբեր ճյուղերում կենդանի ու առարկայացած անհրաժեշտ աշխատանքի զգալի տնտեսմանը։ Միաժամանակ նշենք, որ արտադրության վերջնական փուլերում իրականացված տեխնիկական կատարելագործումները հիմնականում հնարավորություն են ստեղծում սկզբնական փուլերում մետաղի տնտեսում կատարելու։

Մեքենաշինական արտադրության թե՛ սկզբնական և թե՛ վերջնական փուլերում մետաղի տնտեսումը շատ ավելի արդյունավետ է՝ դրա արտադրությունն ավելացնելուց։ Հաշվված է, որ մեկ տոննա գլանվածքի տնտեսման ծախսերը մեքենաշինության մեջ կազմում են 250—300 ռ., այն դեպքում, երբ մեկ տոննա գլանվածքի արտադրության համար անհրաժեշտ հզորությունների ստեղծման միաժամանակյա կապիտալ ծախսերը կազմում են 1250—1500 ռ., ներառյալ անհրաժեշտ քանակությամբ հանքաքարի և վառելիքի արդյունահանման ծախսերը[18]։

Մեր երկրում ամեն տարի խնայվում են մեծ քանակությամբ հումք և նյութեր՝ կապված դրանց արդյունավետ օգտագործման հետ։ 10-րդ հնգամյակում աշխատանքի առարկաների տնտեսումը ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ կազմեց 11,4 մլրդ ռ.[19]։ ՍՍՀՄ մեքենաշինությունում ու շինարարությու-

---

[17] «Материалоемкость продукции и эффективность общественного производства», Л., 1981, с. 5.

[18] «Экономическая газета», 1981, № 13, с. 10.

[19] «Вопросы экономики», 1981, № 8, с. 4.

նում 1976—1980 թթ. տնտեսվեց 6,8 մլն տոննա սև մետաղների գլանվածք, այդ թվում մեքենաշինությունում՝ 5,6 մլն տոննա[20]։

Հումքի, նյութերի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների տնտեսմանն ուղղված աշխատանքը 11-րդ հնգամյակում պետք է իրականանա ավելի արագ տեմպերով։ 1981—1985 թթ. երկրի մեքենաշինության ու շինարարության մեջ նախատեսվում է ապահովել 10,6 մլն տոննա սև մետաղների գլանվածքի տրնտեսում (մեքենաշինությունում՝ 8,5 մլն տոննա)[21]։ Այդպիսի քանակությամբ մետաղի տնտեսման ժողովրդատնտեսական արդյունավետությունը ցույց տալու համար բավական է նշել, որ, ըստ կատարված հաշվարկների, յուրաքանչյուր միլիոն տոննա պողպատի ստացման համար անհրաժեշտ հզորությունների աճը կապված է մինչև 1 մլրդ ռ. դրամական միջոցների ծախսման հետ[22]։ Երկրի բազմաթիվ մեքենաշինական ձեռնարկությունների կոլեկտիվներ պարտավորվել են 11-րդ հնգամյակում արտադրանքի ծավալի ամբողջ աճն ապահովել առանց սև մետաղների գլանվածքի ծախսի ավելացման։ Մետաղի ինտենսիվ օգտագործումը հանգեցնում է ոչ միայն արտադրանքի նյութատարության կրճատման, այլև պայմանավորում է ժողովրդատնտեսական արդյունավետության բարձրացումը։ Եթե անցյալում վերջնական արտադրանքի թողարկման 1% աճի համար անհրաժեշտ էր արտադրության ապահովվածությունը վառելիքով ու հումքով ավելացնել նույնպես 1%-ով, որի հետևանքով արտադրանքի նյութատարությունը չէր նվազում, ապա 11-րդ հնգամյակում վառելիքի ու հումքի աճի յուրաքանչյուր տոկոսի դեպքում վերջնական արտադրանքը պետք է ավելանա 2%-ով և ավելի[23]։

Նյութական ռեսուրսների խնայողական օգտագործման գործում ուսանելի փորձ է կուտակել ԳԴՀ-ն։ Նյութական ռեսուրսների տնտեսման հաշվին ԳԴՀ-ի ժողովրդական տնտեսության պահանջարկի տարեկան աճը 1975 թ. ծածկվել է 40, 1977 թ.՝ 50, իսկ 1980 թ.՝ ավելի քան 80%-ով[24]։ ԳԴՀ-ում մետաղական ջարդոնից հալվում է ամբողջ պողպատի 70—75, կապարի 45, պղնձի 37 և ցինկի՝ 20%-ը[25]։

Աշխատանքի առարկաների ինտենսիվ օգտագործմամբ պայմանավորված հումքի, նյութերի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների անտեսումը թույլ է տալիս խնայելու մեծ քանակությամբ կենդանի աշխատանք ու ֆինանսական ծախսեր, բարելավելու ժողովրդական տնտեսության նյութական ռեսուրսներ արտադրող և սպառող ճյուղերի կառուցվածքը։ Այսպիսով արտադրանքի նյութատարության իջեցումը, նյութական ռեսուրսների խնայողական և արդյունավետ օգտագործումն արտադրության ինտենսիվացման կարևոր ուղի են, վերջնական բարձր արդյունքների հասնելու անհրաժեշտ պայման։

---

20 Н. Байбаков, Одиннадцатая пятилетка, ее особенности и задачи («Плановое хозяйство», 1982, № 1, с. 6).

21 Նույն տեղում։

22 «Известия», 17. II. 1983.

23 «По пути эффективного развития» («ЭКО», 1983, № 1, с. 13—14).

24 Н. Вергун, Н. Промский, Опыт экономии ресурсов в ГДР («Вопросы экономики», 1982, № 1, с. 102).

25 И. Олейник, Направления деятельности стран СЭВ по улучшению использования и экономии топлива, энергии, сырья («Плановое хозяйство», 1982 № 8, с. 107).

ЭКОНОМИЯ МАТЕРИАЛЬНЫХ РЕСУРСОВ КАК УСЛОВИЕ ИНТЕНСИФИКАЦИИ ПРОИЗВОДСТВА

ЛЕВОН ХАЧАТРЯН

Резюме

XXVI съезд КПСС определил ускорение перевода экономики на интенсивный путь развития как важнейшее направление дальнейшего неуклонного подъема народного хозяйства. Повышение уровня интенсификации неразрывно связано с экономным использованием материальных ресурсов во всех отраслях народного хозяйства.

Резервы экономии материальных ресурсов неодинаковы в различных отраслях промышленности. По такому показателю, как удельный вес материальных затрат в структуре затрат на производство продукции, невозможно судить о соответствующих резервах экономии материалов в этих отраслях.

Достижение экономии металла в машиностроении намного эффективнее, чем создание необходимых дополнительных мощностей для его производства. При этом достигаемая на начальных стадиях обработки экономия металла эффективнее по сравнению с такой же экономией, достигаемой в последующих стадиях, так как она позволяет не осуществлять необходимые затраты труда. В машиностроении резервы экономии металла в первую очередь содержатся в заготовительных операциях производственного процесса.